ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1632 16.05.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի մայիսի 5-ին այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի ՄՎ Գավառի բաժնի ՁՊՎ, արձանագրել է, որ

Թերություններ՝

1. Զուգարանից գարշահոտ էր գալիս, արձանագրվեց, որ զուգարանում կարիքները հոգում էին հենց գետնին:
2. Զուգարանակոնքի և լվացարանի ջուրը հոսում էր անընդմեջ և չէր աշխատում:
3. Ճաշասենյակը գտնվում էր կեղտոտ վիճակում, չէր գործում ջրի ծորակը:
4. Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այս անգամ նույնպես արձանագրվել էր, որ աղբամանները լիքն են և չեն մաքրվում:
5. 5-րդ խցի ջրի ծորակը չէր աշխատում:
6. Քննչական սենյակը օգտագործվում էր, որպես պահեստ:
7. Լոգարանի ջրի ծորակը չէր աշխատում: Նշված ՁՊՎ-ի համարյա բոլոր ջրի ծորակները չէին գործում:

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
մուտք № 2442
17. 05. 2016 թ.

Խախտումներ՝

1. 12.01.2016թ-ին Զ.Կ-ն զանգատվել է <<փորլուծությունից, սրտխառնոցից և ընդհանուր թուլությունից>>: Հրավիրվել է շտապ օգնություն: Հրավիրված բժիշկը ախտորոշել է

<< ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱՅԻՆ ՇՏԱԲ
մուտք № 3174
«16» 05 2016 թ.

<<աղիքային սուր թունավորում, կարիք ունի ստացիոնար բուժման>>: Հաջորդ օրը՝ 13.01.2016թ-ին Զ.Կ-ն գանգատվել է առողջությունից և կրկին հրավիրվել է շտապ օգնություն, կրկին ախտորոշվել է <<որովայնի շաշափելի լարվածություն, աղիքային ինֆեկցիա և կարիք ունի հետազոտման>>:

Նշենք, որ նշված անձին ՀՀ սահմանադրությամբ նախատեսված բուժօգնություն չի ցուցաբերվել և անհասկանալի պատճառով ՁՊՎ-ի պատասխանատու ոստիկանը մեկնաբանում է, որ 13.01.2016թ-ին ժամը 11.10-ին բժիշկը ախտորոշել է նրա գանգատները նրանք ժամանակ չեն ունեցել բուժօգնություն ցուցաբերելու, որովհետև նույն օրը ժամը 14.50-ի սահմաններում տեղափոխվել է ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկ: Հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ միայն նշված հիմնախնդիրը նույն օրը չի առաջացել, այլ նախորդ օրն է առաջացել՝ 12.01.2016թ-ին և ոչ մի խոչընդոտ չի եղել նրան բուժօգնություն ցույց տալու համար: Ավելին՝ առաջնահերթ պետք է կազմակերպվեր անձին բուժօգնություն ցուցաբերելը, այլ ոչ թե ուղեկցումը:

2. Է.Մ-ն 23.04.2016թ-ին ժամը 00.45 ընդունվել է ՁՊՎ և արձանագրվել է, որ ոչ մի գանգատ չունի: Նույն օրը՝ հրավիրվել է շտապ օգնություն, բժիշկների կողմից նշում է <<հազ, թուլություն, ցավեր, արձանագրվել է ORVI>> : Ցավերը անհասկանալի են թե ինչի ցավեր են, որովհետև չկա համապատասխան գրառում: 24.04.2016թ-ին կրկին հրավիրվել է շտապ օգնություն և արձանագրվել է <<ցավ թիակի շրջանում ձախից, միջկողային ներազիա>>: Նույն օրը կրկին հրավիրվել է բժիշկ, ով արձանագրել է մոտավորապես նույն ախտանիշները՝ <<կա թոքի թաց խզոցներ, առկ աշնչահեղձություն, նկատվում է խորխի առկայություն, կարիք կա հետազոտման, շտապ, առկա է նաև ճնշման տատանողականություն>>: Բուժօգնության և բուժզննության 106 ամարի տակ, առկա է գրառում <<աջ նախաբազկի քերծված վերքեր>>, որտեղ ոչ արձանագրած փաստի օրն է նշված, ոչ գանգատները: Պատասխանատու ոստիկանների կողմից միայն ներկայացվեց, որ ինքնավնասում է տեղի ունեցել:

Հարկ է կրկին նշել, որ անձը ունեցել է բուժօգնության և ստացիոնար հետազոտման կարիք, որը չի իրականացվել և կարելի է ենթադրել, որ ինքնավնասումը կապված է համապատասխան բուժօգնություն չստանալու հետ:

3. <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում տեսակցություն տրամադրելու ժամանակ որոշ դեպքերում խցից դուրս բերելու համար հիմքը գրվում է, թե ում դիմումի համաձայն և ում հետ է տեսակցություն տրամադրվել, իսկ որոշ դեպքերում չի նշվում(կոնկրետ դեպք N248): Պատասխանատու ոստիկանը, որպես առարկություն,

անհասկանալի պատճառներով նշել էր, որ <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյան համապատասխան աղյուսակերից ոչ մի տեղ չի պահանջվում նշել թե ում հետ և ինչ հիմքով է տեսակցություն ապահովվել: Այնինչ փաստում ենք, որ գրանցամատյանի 4-րդ սյունյակը պահանջում է հենց խցից դուրս բերման հիմքը:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրածը և տալ մեկնաբանություն:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1- 1820 <<19>> 05 2016թ.

Ձեր 16.05.2016թ. թիվ 2621/1632 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. մայիսի 5-ին ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Գեղարքունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Նշված բոլոր թերությունները արդեն իսկ վերացվել են՝ զուգարանի հատակը վերանորոգվել է և տեղադրվել է ջրատար, բոլոր ջրի ծորակները փոխարինվել են նորերով և պատշաճ ձևով իրականացվում է ՁՊՎ-ի մաքրությունն ու սանիտարահիգիենիկ վիճակի պահպանումը:

Խախտումներ.

1. ՁՊՎ-ում պահվող կալանավոր Զ.Կ-ն 12.01.2016թ. գանգատվել է առողջությունից, որի համար հրավիրվել է շտապօգնության բուժանձնակազմ: Հրավիրված բժշկի կողմից ախտորոշվել է <<աղիքային սուր թունավորում (հարցականով), կարիք ունի ստացիոնար բուժման>>: Ցուցաբերված համապատասխան բուժօգնությունից հետո Զ.Կ-ն իրեն լավ է զգացել, այդ իսկ պատճառով էլ նա մասնագիտացված կամ այլ քաղաքացիական բուժհաստատություն չի տեղափոխվել: Հաջորդ օրը՝ 13.01.2016թ. Զ.Կ-ն կրկին գանգատվել է առողջությունից և դարձյալ հրավիրվել է շտապօգնության բուժանձնակազմ: Բժշկի կողմից ախտորոշվել է <<որովայնի շոշափելի լարվածություն, աղիքային ինֆեկցիա, կարիք ունի հետազոտման>>: **Ցուցաբերված համապատասխան բուժօգնությունից** հետո բժիշկը տեղեկանք է տվել, որ թույլատրվում է կալանավորի տեղափոխումը ՔԿՀ, որից հետո նույն օրը կալանավորը տեղափոխվել է ՔԿՀ:

2. Ձերբակալված Է.Մ-ն ՁՊՎ է ընդունվել 23.04.2016թ. ժամը 00.45-ին, որի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում նշվել է, որ գանգատներ չունի: Հաջորդիվ, նույն օրը Է.Մ-ն գանգատվել է առողջությունից, որի համար հրավիրվել է շտապօգնության բուժանձնակազմ: Հրավիրված բժշկի կողմից ախտորոշվել է

<<հազ, ընդհանուր թուլություն, ցավեր>> և ցուցաբերվել է համապատասխան բուժօգնություն: Հաջորդ օրը 24.04.2016թ. Է.Մ-ն կրկին գանգատվել է առողջությունից, ինչի համար հրավիրվել է շտապօգնություն: Հրավիրված բժիշկը ախտորոշել է <<ցավ ձախ թիակի շրջանում, միջկողային ներազիա>> (հարցականով) և ցուցաբերել է համապատասխան բուժօգնություն: Որոշ ժամանակ անց Է.Մ-ն կրկին գանգատվել է առողջությունից և կրկին հրավիրվել է շտապօգնություն, սակայն ձերբակալվածը հրաժարվել է բուժօգնությունից և ցանկություն է հայտնել, որ իրեն բուժօգնություն ցուցաբերի իր կողմից ընտրած բժիշկը: ՁՊՎ-ի վարչակազմը Է.Մ-ի կողմից ընտրած բժշկուհուն հրավիրել է ՁՊՎ, որի կողմից ախտորոշվել է <<կա թոքի թաց խզոցներ, առկա է շնչահեղձություն, նկատվում է խորխի առկայություն, ճնշման տատանողականություն, կարիք կա հետազոտման>> և ցուցաբերել է համապատասխան բուժօգնություն:

Հերթապահ մասի պետը ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված <<ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ>>-ի 179-րդ կետի համաձայն ձերբակալվածի կողմից ընտրած բժշկուհուն խնդրել է տրամադրել գրավոր եզրակացություն, ինչի հիման վրա ձերբակալվածը կտեղափոխվեր մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն: Բժշկուհու կողմից եզրակացություն չի տրամադրվել, հետևաբար ձերբակալվածի տեղափոխությունը հնարավոր չի եղել իրականացնել, իսկ ձերբակալված Է.Մ-ն իր ընտրած բժշկուհու կողմից բուժօգնություն ստանալուց հետո այլևս առողջության վերաբերյալ գանգատներ չի հայտնել:

Հարկ է նշել, որ վերը նշված երկու դեպքով էլ ՁՊՎ վարչակազմը իրենց լիազորությունների սահմաններում կատարել են իրենց վրա դրված օրենքով սահմանված պարտականությունները, ինչի արդյունքում ՁՊՎ-ում պահվող անձինք ստացել են անհրաժեշտ բուժօգնություն և նրանց իրավունքները չեն խախտվել:

Ինչ վերաբերվում է <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում Է.Մ-ի կողմից ինքնավնասում կատարելու վերաբերյալ առկա գրառմանը, ապա տեղեկացվում է, որ ձերբակալվածը ինքնավնասում կատարել է 25.04.2016թ. ժամը 18.00-ին՝ իր նկատմամբ որպես խափանման միջոց կալանք կիրառելու դատարանի որոշումից հետո: Ինքնավնասում կատարելու մասին իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին, նախապատրաստվել են նյութեր, որի ընթացքում Է.Մ-ն հայտարարել է, որ ինքնավնասումը կատարել է ի նշան բողոքի՝ դատավորի կողմից կայացված որոշման դեմ, այլ ոչ թե ՁՊՎ-ում բուժօգնություն չստանալու համար՝ ինչպես ենթադրել է դիտորդների խումբը:

3. ՁՊՎ-ում պահվող անձանց հարազատների հետ տեսակցություն տրամադրելիս ՁՊՎ վարչակազմի կողմից <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում տեսակցություն տրամադրված հարազատի տվյալները նշելով կամ չնշելով որևէ խախտում թույլ չի տրվել: Նշված գրանցամատյանի 4-րդ սյունակում պահանջվում է նշել միայն խցից դուրս բերման հիմքը: Հարազատների հետ տեսակցության տրամադրման դեպքերում ՁՊՎ-ում պահվող անձին խցից դուրս բերման հիմքը հանդիսանում է հարազատի կողմից ներկայացված **դիմումը**, ինչը և նշվում է տվյալ սյունակում, իսկ թե ում կողմից է տրվել դիմումը և ում հետ է տեսակցություն տրամադրվել դրա վերաբերյալ նշումներ կատարելը պարտադիր չէ: Տեսակցության եկած քաղաքացու տվյալները և հարազատական կապը ՁՊՎ-ում պահվող անձի հետ նշվում է քաղաքացու կողմից ներկայացված դիմումում:

ՀՀ ոստիկանության շտաբ